

Վարկային գործառնությունները տնտեսության բնականոն գործունեության ապահովման նախադրյալներից մեկն են: Արդյապես տնտեսագիտական հասկացություն՝ վարկը ներկայացնում է վարկատուի եւ վարկառուի միջեւ փոխհարաբերությունների ամբողջություն, որոնք առաջանում են դրամական միջոցները ժամանակավոր օգտագործման տրամադրելու, դրանք վերադարձնելու եւ տոկոսները վճարելու առնչությամբ:

Տնտեսական հարաբերությունների համակարգում վարկը զբաղեցնում է կարեւոր դիրք՝ ինչպես տնտեսական ինքնուրույն հասկացություն: Իրավաբանական եւ ֆիզիկական անձինք վարկերի շնորհիվ ունեն հիանալի հնարավորություն՝ բավարարելու իրենց տնտեսական եւ անձնական պահանջները՝ հաղթահարելու ֆինանսական ռեսուրսների սահմանափակության խնդիրը: Վարկերի միջոցով տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն ունեն բավարարել ֆինանսական լրացուցիչ միջոցների նկատմամբ իրենց պահանջարկը:

Վարկային հարաբերությունները կազմակերպություններին հնարավորություն են ընձեռում լրացուցիչ միջոցների հաշվին ընդլայնել արտադրությունը, ավելացնել ռեսուրսները, հասնել ցանկալի արդյունքների: Ամբողջությամբ վերցրած՝ վարկը կարող է նպաստել հասարակության տնտեսական ներուժի հզորացմանը: Տնտեսական սուբյեկտներին վարկավորման ժամանակ ֆինանսական շուկայի միջնորդները պետք է իրականացնեն հնարավոր վարկառուների ֆինանսական վիճակի վերլուծության եւ այդ վերլուծության հիման կայացնեն օբյեկտիվ որոշում:

Վարկը շուկայական տնտեսության անխափան գործունեությունն ապահովելու տեսանկյունից կատարում է մի քանի գործառնություն՝ վերաբաշխման, միջոցների շրջանառության ապահովման, կապիտալի, արտադրության կենտրոնացման եւ տնտեսության վարկային կարգավորման: Փոխառական կապիտալը վերաբաշխվում է տնտեսության ճյուղերի միջեւ՝ ելնելով շուկայի օրենքներից, կապիտալի հոսքն ուղղվում է բարձր շահույթ ապահովող ճյուղեր: Մյուս կողմից՝ վարկն անհրաժեշտ է գործող կազմակերպությունների միջոցների անընդհատ շրջանառության ապահովման, ապրանքների ապառման գործընթացի սպասարկման համար:

Շուկայական տնտեսության պայմաններում ֆինանսական վերլուծությունը ստացել է նոր դեր, նշանակություն եւ որակ: Վարչահրամայական տնտեսության պայմաններում չկային վարկային հարաբերությունների զարգացման նպաստավոր պայմաններ, քանի որ տնտեսավարող սուբյեկտների վարկավորումն իրականացվում էր կենտրոնացված ձևով՝ վերելից ներքեւ, ուստի՝ խոսք լինել էր կարող միջոցների արդյունավետ օգտագործման մասին: Շուկայական տնտեսության պայմաններում վարկավորման գործընթացում շահագրգիռ կողմեր են եւ՝ վարկառուն, եւ՝ վարկատուն, ուստի՝ երկուստեք կարելի էր վարկառու կազմակերպության ֆինանսական համակարգված վերլուծությունը: Շուկան թելադրում է մրցակցային կոչտ պայմաններ. գոյատևում են միայն ուժեղները, այսինքն՝ այն տնտեսավարողները, որոնք, խելամիտ ըմբռնելով շուկայի խաղի կանոնները, ընտրում են ճիշտ ռազմավարություն, որն ապահովում է ֆինանսական կայունություն եւ միաժամանակ վարկունակության բարձր մակարդակ:

Վնահատելու համար տնտեսության մեջ վարկի ունեցած դերը, պետք է պատմական շրջայց կատարենք տնտեսական մտքի զարգացման ակունքներից մինչեւ մեր օրերը:

Տնտեսության վրա վարկի ազդեցությունը ներկայացվում է տարբեր կերպ: Այդ հարցի վերաբերյալ գոյություն ունեն տարբեր տեսակետներ, որոնցից կներկայացնենք երեքը:

Առաջին տեսակետի՝ վարկի չեղով տեսության՝ կողմակիցները (Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո, Ժ. Սեյ, Ֆ. Բատիստա, Դ. Սակ-Կուլո) նշում են, որ վարկը տնտեսության վրա ունի բացասական ազդեցություն: Այստեղ վարկը, ինչպես փողը, տեխնիկական միջոց է (կատեգորիա), տնտեսական գործընթացների վրա էական ազդեցություն չի ունենում, ազդում է միայն գների վրա եւ ոչ թե արտադրության, իրենից ներկայացնում է միջոցների տեղաշարժ մի ոլորտից մյուսը, ունի մակրոտնտեսական ընթացություն ներդրողների համար, որոնք հնարավորություն են ընձեռվում վարկային միջոցների շնորհիվ ներդնել իրենց ունեցածից ավելին, որը կապիտալ չի հանդիսանում ու կապիտալ չի ստեղծում եւ տնտեսական ճգնաժամերի պատճառ է դառնում: Վարկը ներկայացնում է վերաբաշխման միջոց, ուստի՝ մենք կարող ենք միայն վերաբաշխել արդեն գոյություն ունեցող միջոցները: Վարկը պասիվային դեր է իրականացնում հետեւաբար՝ առեւտրային բանկերն ընդամենը միջնորդ են դրա տրամադրման ժամանակ: Վարկի օբյեկտ են բնական, այսինքն՝ ոչ դրամական իրերն են բարիքները:

Այս տեսության կոմակիցներից են նաեւ Կ. Մարքսը եւ Կ. Ժյուզլարը: Կ. Մարքսը նշում է, որ կապիտալիստական արտադրական հարաբերությունների զարգացումը անհնար կլինեին առանց վարկային համակարգի, բայց «խորհուրդ չի տրվում ստեղծել մի ֆեթ»՝ վարկի արտադրողական ուժի մասին, քանի որ այն միայն իրականացնում է դրամական կապիտալի վերաբաշխում կամ ներկայացնում է դրա շարժումը:

Ըստ Կ. Ժյուզլարի, պատերազմները, աղետները, վարկերի ոչ նպատակային օգտագործումը, թաթաղարմի բավական շատ թողարկումը չեն կարող արդյունաբերական ճգնաժամ առաջացնել, եթե ամբողջ տնտեսությունը չի նպաստում դրան: Դրանք կարող են արագացնել ճգնաժամի առաջացումը, եթե միայն դա անխուսափելի է ընդհանուր տնտեսական իրավիճակի արդյունքում:

Երկրորդ տեսակետի՝ վարկի կապիտալ ստեղծող տեսության կողմակիցները (Ի. Լո, Գ. Սակլեոդ, Ի. Շումպետեր, Ա. Գան, Զ. Գոլդհորն) նշում են, որ տնտեսության զարգացման վրա մեծ է արդարացված ազդեցություն ունի պետությունը: Ըստ այս տեսակետի՝ վարկը «հանճարեղ հայտնագործություն» է, եւ ոչ միայն կապիտալի աճի աղբյուր է, այլ նաեւ հնարավորություն է ընձեռում արտադրության ծավալների աճի, այսինքն՝ արտադրության արտադրողականությունը կարող է բարձրանալ միայն այդ ճանապարհով, եւ վարկը հանդիսանում է տնտեսական աճի հիմնական տարր: Վարկեր տրամադրելով՝ բանկերը ստեղծում են նոր փողեր եւ կարող են անսահման մեծացնել դրամի առաջարկը՝ մուլտիպլիկատորի էֆֆեկտի շնորհիվ: Վարկերի միջոցով երկրի չօգտագործվող արտադրական հնարավորությունները դրվում են շարժման մեջ: Վարկը նույնացվում է փողի եւ հարստության հետ: Կապիտալի ձեւավորումը ոչ թե խնայողության,

ՎԱՐԿԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԴՐԺԻՉ ՈՒԺ

Ատենախոսության թեմա՝
Վարկային պորտֆելի կառավարման
հիմնախնդիրը ԳԳ բանկերում
Գիտական դեկավար՝
Սամվել ՆԱՅԳԵՏՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու

Եղիշե
ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ԵՊԳ
տնտեսագիտության
ֆակուլտետի
ասպիրանտ



այլ վարկի արդյունք է, այսինքն՝ վարկը նախորդում է կապիտալի ստեղծմանը:

Համաձայն երրորդ՝ վարկի վատաստական տեսության կողմնակիցների² (Վ. Լենգտոն, Ա. Գալլատին, Ա. Մարշալլ, Ի.Ս. Միլլ), վարկը (ինչպես փողը), չափավոր, հավասարակշռող դեր ունի, այն չի վնասում տնտեսությանը, բայց չի ավելացնում ապրանքաշրջանառությունը, քանի որ անգամ լրացուցիչ վարկի դեպքում իրական կապիտալի ծավալը դրանից կախված չէ: Այս տեսության տարբեր կողմնակիցներ ներկայացրել են իրենց տեսակետները:

Ըստ Վ. Լենգտոնի՝ տնտեսական ցնցումների ժամանակ, բացի փիլիսոփայական պատճառներից, եական պատճառ է նաեւ վարկերի չափից շատ օգտագործումը: Ա. Գալլատինի կարծիքով՝ վարկը կարելի է խաղում ճգնաժամերի առաջացման ժամանակ: Ակտիվ առեւտրային երկրները անխուսափելիորեն ենթակա են առեւտրային ճգնաժամերի: Մի շարք տարիների ընթացքում առեւտրային գործունեության ընդլայնումն ի վերջո կարող է հանգեցնել ճգնաժամերի, որի հաճախականությունը եւ չափերը կախված են վարկերի ծավալից ու դրանց չարաշահումից:

Ա. Մարշալլը ճգնաժամի առաջացումը պայմանավորում է վարկերի ոչ խելամուտ ընդլայնմամբ:

Համաձայն Ի.Ս. Միլլի՝ վարկը խթանիչ է ապրանքների անսահման պատվերների, որոնց իրացումից արտադրողները ակնկալում են ստանալ սպեկուլյատիվ եկամուտ: Սակայն ապրանքների մի մասը կարող է չիրացվել, եւ սպեկուլյացիայի զարգացումը կարող է տնտեսության վրա բացասական ազդեցություն ունենալ:

Ըստ Է.Յ. Բրեզելի³, վարկի դերը կապիտալիզմի հակասությունների զարգացման ժամանակ արտահայտվում է այն բանում, որ այն նպաստում է տնտեսական ճգնաժամերի սրացմանը, չնայած դրանց առաջացման պատճառն է: Դա տեղի է ունենում, քանի որ վարկը արագացնում է ապրանքների գերարտադրությունը, մեծացնում է կապիտալիստական արտադրության տարբեր ոլորտների զարգացման անհամաչափությունը, խթանում է սպեկուլյացիան, ստեղծում է ապրանքների կեղծ պահանջարկ:

Տնտեսության վրա վարկերի ազդեցության ուսումնասիրության տեսությունների բազմազանությունը պայմանավորված է այն բանով, որ չկա վարկերի հստակ սահմանում, չնայած որպես տնտեսական վերլուծության օբյեկտ՝ այն միշտ եղել է տնտեսագետների ուսումնասիրության կենտրոնում:

Վարկը սկզբից եւթ ռենցել է ե՛ր՝ դրական, ե՛ւ՝ բացասական կողմեր, վերջինը դրա ոչ թե օբյեկտիվ մեկնաբանությունն է, այլ սուբյեկտիվ՝ դրա ոչ ճիշտ օգտագործման դեպքում: Վարկն ունի արտադրողական բնույթ, որի նպատակը ռեսուրսների կենտրոնացումն է, որոնք հետագայում ծառայում են որպես տնտեսական լրացուցիչ ներուժ:

Տնտեսագետ ժուլյարը⁴ ներկայացնում է վարկային ներդրումների եւ վարկային տոկոսի կապը տնտեսական ցիկլի տարբեր փուլերում: Վերջինս ներկայացնում է 3 փուլ.

- Բիզնես ցիկլի «վերելքի փուլ», որը տեւում էր 7-9 տարի, եւ որի ընթացքում բանկերը, ապագայի նկատմամբ ունենալով վստահություն, հեշտույթմբ մեծացնում էին վարկային ներդրումները՝ առանց հոգալու իրացվելիության նվազման մասին: Արդյունքում վարկավորման տոկոսն աճում է:

- Ծգնաժամի փուլ, երբ վարկային ներդրումների աճը դանդաղում է, ապա վարկի տոկոսը նվազում է:

- Նախորդ փուլից հետո վարկային ներդրումների չկարգավորված կառուցվածքը փոփոխության է ենթարկվում, ստացվում է նոր օպտիմալ համամասնություն, վարկի տոկոսն իջնում է, վստահությունը բանկերի նկատմամբ վերականգնվում է, եւ նախապայմաններ են ստեղծվում նոր վերելքի համար: Այս փուլը կոչվում է «լիկվիդացիոն փուլ» եւ տեւում է 2-4 տարի՝ ավելի քիչ, քան առաջին փուլն էր:

Լինելով արտադրության արագացման եւ ընդլայնման գործիք՝ վարկն ինքը ապրանք չի ստեղծում, այլ աշակցում է դրա արտադրությանը, քանի որ նրա գործունեությունն արտահայտվում է ոչ թե արտադրության, այլ հասարակական արտադրանքի շրջանառության փուլում: Ամեն դեպքում վարկը ոչ միայն միջնորդավորված օժանդակում է արտադրությանը, այլ ունի առանձնահատուկ դեր՝ իրականացնելով ռեսուրսների կենտրոնացում: Վարկի «ստեղծագործական» ուժի հակառակորդները պաշտպանում էին այն տեսակետը, որ ռեսուրսների տեղաշարժը մեկից մյուսին, փոքրացնում է դրանք մեկի մոտ եւ ավելացնում մյուսի մոտ: Սակայն դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ ազատ միջոցներն օգ-

տագործում են հենց իրենց սեփականատերերը, հակառակ դեպքում տեղի է ունենում չգործող ռեսուրսների կենտրոնացում՝ ստեղծելով լրացուցիչ ճնշումներ:

Վարկերի միջոցով միավորվելով՝ դրամական հոսքերը վերածվում են նոր հզոր «Էներգետիկ» ուժի՝ հնարավորություն ընձեռնելով ստեղծել լրացուցիչ տնտեսական արդյունք այնտեղ, որտեղ այն օգտագործվում է: Անպատճառ՝ այդ էֆեկտի ձեռքբերումները կախված են վարկի ստեղծագործական ուժի ճիշտ օգտագործումից: Մյա հետ կապված՝ գործնականորեն պետք է մակրոտնտեսական մակարդակում սահմանափակել վարկի ինֆլյացիոն ազդեցությունը դրամաշրջանառության վրա, իսկ միկրոմակարդակում նվազեցնել վարկային ռիսկի ազդեցությունը տնտեսության վրա:

Վարկային գործունեությունը ազդում է ոչ միայն դրամաշրջանառության, այլեւ ամբողջ արտադրական ցիկլի եւ նրա առանձին փուլերի վրա, ինչպես նաեւ արտադրության ծավալի, զբաղվածության, գների, սղաճի եւ այլն: Փոխհարաբերությունների այս բազմաձեւությունը գործնականում դեռեւս ամբողջությամբ ուսումնասիրված չէ: Վարկի միջոցով տնտեսությունը ապահովվում է վճարային անհրաժեշտ միջոցներով, փոխառուն եկամուտ է ստանում, չեզոքացվում են դրամական միջոցների «ոչ արդյունավետ» կուտակումների բացասական հետեւանքները: Դրամական լրացուցիչ միջոցների շնորհիվ ավելանում է զբաղվածությունը, որն էլ բերում է ապրանքային գնազվածի ավելացման (չնայած դա ոչ միշտ է տեղի ունենում, քանի որ անհրաժեշտ է հետեւել լրացուցիչ մի քանի պայմանի, մասնավորապես՝ վարկի միջոցով շարժման մեջ դնել արտադրական պաշարները):

Սակայն չափից շատ վարկերն ազդում են փողի գնողունակության վրա: Եթե առեւտրային բանկը ցանկություն ունենա տրամադրել ավելի շատ վարկեր, քան իր ունեցած դրամական միջոցներն են, ապա կառաջանան իրացվելիության խնդիրներ, եւ կխախտվեն վարկատուի իրացվելիության նորմատիվները: Այստեղ հարց է առաջանում. արդյո՞ք վարկը ստեղծում է լիարժեք փող, թե միայն վերաբաշխում է այն, ինչը ստեղծվել էր վաղուց: Բանկը, կուտակելով դրամական ազատ միջոցները եւ միավորելով դրանք, վարկերի միջոցով դրանք հատկացնում է այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնք այդ ռեսուրսների կարիքն ունենին: Պետք է նաեւ հաշվի առնել, որ բանկը չի կարող ստեղծել ավելին, քան պահանջում է տնտեսությունը, կամ թույլ են տալիս իր պահուստները:

Հետեւաբար՝ վարկը սղաճ չի ստեղծում, քանի որ այն սահմանափակված է իր դրամական միջոցներով եւ ազատ պահուստների սահմաններով ու գործում է կուտակված միջոցների սահմաններում, տրամադրվում է արտադրության ոլորտում չօգտագործված պահուստների առկայության դեպքում, չի դարձրում վերարտադրության որեւէ փուլում, միաժամանակ՝ ընդլայնում է ազատ իրացվող ապրանքների արտադրությունը, վարկի շրջանառության ժամկետը չի գերազանցում նոր արտադրանքի թողարկման ժամկետը: Պրոֆեսոր Օ.Ի. Լավրոշինի կարծիքով⁵, նոր վճարամիջոցների ներդրումը նախընտրելի է կատարել վարկերի միջոցով, վերաֆինանսավորման համակարգի ընդլայնման միջոցով, ինչը հիմնված է լավ մշակված մոնետար ծրագրի վրա, որի համաձայն՝ վճարային լրացուցիչ միջոցները պետք է օգտագործվեն բացառապես արտադրական նպատակներով, արդյունավետ ծրագրերի միջոցով, որոնք ապահովում են վարկային ներդրումների արագ հատույց եւ հուսալիություն: Այդ պատճառով էլ բանկերի առջեւ խնդիր է դրված գնահատել տրամադրված դրամական միջոցների վերադարձելիությունը՝ բացառելով դրանց ոչ նպատակային օգտագործումը:

Վարկի շարժման աղբյուրը արժեքի շարժն է: Վարկն առաջանում է ոչ թե ապրանքների արտադրության փուլում, այլ փոխանակման, որտեղ ապրանքների սեփականատերերը հակազդում են միմյանց՝ տնտեսական հարաբերությունների մեջ մտնելիս: Վարկային հարաբերությունների առաջացման եւ զարգացման տնտեսական հիմքն է կապիտալի շրջապտույտը, որն առանձնանում է անընդհատությամբ եւ միաժամանակ տարաբնույթ տատանումներով՝ կախված ռեսուրսների նկատմամբ պահանջարկից եւ դրանք ֆինանսավորման աղբյուրներից:

Արտադրական պտտեցիայի առանձին բաղադրիչների արժեքի վերականգնման բնույթի տարբերություններով, արտադրության առանձնահատկություններով, արտադրանքի իրացման առանձնահատկություններով եւ տարբեր սեզոնային գործունեությամբ պայմանավորված՝ տեղի է ունենում կալիտալի ոչ հավասարակշռված շրջապտույտ: Արդյունքում՝ տնտեսական հարաբերությունների մի կողմի մոտ առաջանում են դրամական ազատ միջոցներ, իսկ

մյուսների մոտ՝ դրանց պահանջարկ: Արտադրության և շրջանառության ժամանակային անհամապատասխանությունը օգնում է հարթահարել վարկային հարաբերությունները:

Վարկն ապահովում է տնտեսության նորմալ գործունեությունը, քանի որ տարբեր պատճառներով մի տնտեսավարող սուբյեկտի մոտ սեփական միջոցները չեն բավականացնում (արդյունավետ չի համարվում դրանց կուտակումը սեփական կապիալում, քանի որ դա ոչ շահութաբեր է), իսկ մեկ այլ սուբյեկտ ունի միջոցներ, որոնք պատրաստ է տրամադրել մեկ ուրիշի՝ օգտագործման: Կազմակերպության գործունեության ընթացքում ֆինանսական ռեսուրսների շարժը, ինչպես նաև ֆինանսական հարաբերությունները, որ առաջանում են տնտեսավարող սուբյեկտների միջև, ուսումնասիրվում և գնահատվում են ֆինանսական վերլուծության ժամանակ:

Այսպիսով՝ կապիտալի շրջապտույտի ժամանակ էլ նախադրյալներ են ստեղծվում վարկային հարաբերությունների ձևավորման համար, որի ամբողջացման համար անհրաժեշտ են նաև հետևյալ պայմանները. վարկային հարաբերությունների սուբյեկտների առկայություն և նրանց շահերի փոխադարձ համաձայնեցում: Վարկային հարաբերությունների սուբյեկտները, տարածականորեն բաժանված լինելով, հնարավորություն ունեն օգտագործել իրենց հնարավորությունները: Ժամանակային անհամապատասխանության հարթահարման եղանակն այն է, որ վարկը հնարավորություն է տալիս ռեսուրսները անցյալից դարձնել ներկա և ապագայից դարձնել ներկա, այսինքն՝ այն ներկա է դարձնում արդեն նախօրոք ստեղծված ռեսուրսներն ու դրանց ստիպում է աշխատել հոգուտ տնտեսական զարգացման և կանխատեսում է ապագայի ուժը, իսկ ռեսուրսների փոխարինման եղանակն այն է, որ վարկի օգնությամբ ներկայում կատարում ենք ծախսեր՝ ապագայում ակնկալելով շահույթ:

Անվիճելի է վարկավորման դերը ՀՀ-ում շուկայական տնտեսության կառուցման երկար ու բարդություններով լի ճանապարհին:

Հայաստանում շուկայական տնտեսության անցման պայմաններում, երբ տնտեսությունը կարիք ուներ ներդրումների ու կապիտալի, վարկավորման գործընթացի ինտենսիվ զարգացումն անկասկած նպաստեց վարկային հարաբերությունների զարգացմանը՝ որպես ներդրումների աղբյուր տնտեսություն մեջ պետության կողմից բյուջետային ֆինանսավորման բացակայության պայմաններում:

Անկախությունից ի վեր ՀՀ տնտեսության մեջ ֆինանսական միջնորդության մակարդակը բավական աճել է. բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը ավելացել է 4.6 տոկոսային կետով՝ կազմելով 24.4%, բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը ավելացել է 4.4 տոկոսային կետով և կազմել 13.0%: Ֆինանսական միջնորդության մակարդակը Հայաստանում դեռևս ցածր է, սակայն տնտեսության կայուն զարգացման պայմանները և բնակչության եկամուտների աճը ՀՀ ֆինանսական համակարգի ընդլայնման լուրջ հիմքեր են ստեղծում:

Տնտեսության կայուն զարգացման պայմաններում ՀՀ ֆինանսական համակարգը ընդարձակման ու խոշորացման բավականաչափ ներուժ ունի: Որպես ֆինանսական միջնորդության մակարդակի բնութագրիչ՝ տոկոսադրույքների սպրեդի համեմատաբար բարձր մակարդակը վկայում է ՀՀ ֆինանսական համակարգում ֆինանսական անբավարար միջնորդության ստիճան: Տարվա ընթացքում տոկոսադրույքների սպրեդը տատանվել է **13 տոկոսային կետի միջակայքում (Մերձբալթյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների 4-6 տոկոսային կետ կազմող սպրեդի նկատմամբ ՀՀ բանկերի տոկոսադրույքների սպրեդը մնում է բավական բարձր):**

Սպրեդի բարձր մակարդակը հիմնականում վարկերի բարձր պահանջարկի պայմաններում դրանց սահմանափակ առաջարկի առկայության արդյունք է: Կարենորագույն խնդիր է նաև երկարաժամկետ վարկերի պահանջարկի բավարարումը: Համակարգում երկարաժամկետ ինստիտուցիաների շարունակական բացակայության պայմաններում երկարաժամկետ վարկավորման դեպքում կարող է առաջանալ ներգրավման-տեղաբաշխման անհամապատասխանությունից բխող իրացվելիության և տոկոսադրույքների զիսկերով պայմանավորված խնդիրներ: Այս առումով Կենտրոնական բանկն ակտիվ քայլեր պետք է ձեռնարկի ապահովագրության, արժեթղթերի շուկաների, ինչպես նաև կենսաթղջային համակարգի զարգացումների նախադրյալների ստեղծման ուղղությամբ, քանզի տնտեսության մեջ «երկար փողերի» ձևա-

վորման կարենորագույն նախադրյալ է նշված ինստիտուտների կայացումը:

2007թ. բանկային համակարգի հատկանշական դրսևորումներից են եղել.

- Վարկերի աննախադեպ աճը. տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալներն աճել են 78%-ով:

- Ներկայում բանկային համակարգում սրվել է պասիվների (ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները) և ակտիվների (բանկի տեղաբաշխած միջոցներ) ժամկետային անհամապատասխանությունը: Վարկային ներդրումների տատանումները սերտ կապված են տնտեսական ակտիվության տատանումների հետ:

- Բանկերի՝ վարկ տրամադրելու պատրաստակամությունը նույնպես եական ազդեցություն ունի տնտեսական ակտիվության վրա:

- Հաշվի առնելով վարկային ներդրումների և վարկի տրամադրման պայմանների միջև առկա նշանակալի հակադարձ կապը՝ վերջինները բավական լավ ինդիկատոր են վարկային ներդրումների և ՀՆԱ-ի սպասվող աճի համար:

- Վերը նշվածի արդյունքում ժխտվել է այն վարկածը, որ 1990-ականներից ի վեր բանկային համակարգի ազդեցությունը տնտեսության իրական հատվածի վրա նվազել է՝ ի հաշիվ ֆինանսական շուկայի այլ հատվածների:

1. *Общая теория денег и кредита, Учебник для вузов, Под ред. Е. Ф. Жукова, М.: ЮНИТИ-ДАНА, 2001.*
2. *Классики кейнсианства, В 2-х т., Сост. А. Г. Худокормов, М.: Т. 2, Экономика, 1997, Экономические циклы и национальный доход, Ч. III-IV.*
3. *Брегел Е. Я., Денежное обращение и кредит капиталистических стран, Учебное пособие, М.: Госфиниздат, 1955.*
4. *Niehans J. (1992), Juglar's credit cycles, History of Political Economy, 24 (3), 545-569.*
5. *Лаврушин О. И., Особенности использования кредита в рыночной экономике, Банковское дело, 2002.*